

351.75

ԱՐ

Հ-11

Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացի՛ք.

ՀՐԱՀԱՆԳ

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ

ՈՒՂԵԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՀԱՆԳԱՄԱՆԻ ԱՅՐԱՖՈՅԱՆԻ
ԸՆԹԱԳՈՐԾ

1926 թ.

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

351.75

3-11

01 MAR 2010

ՀՐԱՀԱՆԳ

ՄԻԼԻՑԻԱՅԻ ՈՐԳԱՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՁԵՐԲԱԿԱՎԱԾՆԵՐԻՆ
ՈՒՂԵԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1003
13823



ՀՐԱՀԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ն. Գ. Ժ. ԿՈՄԻՍԱՐԵԱՆ
ԺԵՐԵՎԱ

1926

09 SEP 2013

39455

«ՀԱՅՏԱՏՎՈՒՄ Ե»

Ներբգործողկոմ՝ Յ. ԴԱԻՐԻՑԱՐՑԱՆ
Հանրամիլիոն՝ Ա. ԲԵՐԲԵՐՅԱՆ

«1» Մարտի 1926 թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ձերբակալվածներին ուղեկցելու պահակության պարտականությունները կատարում են քաղաքներում՝ միլիցոներները, իսկ գյուղական վայրերում՝ գյուղական կատարածուները և միլիցոներները:

2. Ուղեկցող պահակախումբը կազմվում է կրտսեր միլիցոներներից, իսկ ավագ միլիցոներները միայն նշանակվում են ձերբակալվածների մեծ խումբ կամ առանձնապես վտանգավոր հանցագործների ուղեկցող խմբերի «ավագ»։ Դյուղական կատարածուներից կամ կրտսեր միլիցոներներից կազմված պահակախմբից մեկը նշանակվում է ավագ։

3. Բոլոր պահակները կատարում են միայն ավագի հրամանները։ Ինքը ավտոգն ել կատարում ե պահակախումբ նշանակող անձի հրամանները։

Տրեստի առաջին տպարան

Գրտու. № 397 թ. պատվեր № 2741 տիրաժ 175

4. Ուղեկցող պահակախումբը նշանակողը, ճանապարհ գնելուց առաջ հավաստիանում ե պահակների գենքի, վերին հազուստի, վոտնա- մանների կանոնավոր դրության մեջ գտնվելու մասին, ինչպես և՝ արդյոք պահակները գիտեն իրենց պարտականությունները:

5. Ուղեկցող պահակախումբը նշանակվում է հետեւյալ հաշվով.— մեկ միլիցոները ուղեկ- ցում ե միայն մեկ ձերբակալվածի, 2-ից մին- չե 5 ձերբակալվածներ ունեցող խմբին ուղեկ- ցելու նշանակվում է յերեք պահակ, 6-ից մին- չե 10 ձերբակալվածներին՝ 5 պահակ, 11-ից մին- չե 20 ձերբակալվածներին՝ 8 պահակ, 21-ից մինչե 30 ձերբակալվածներին՝ 10 պահակ, 31-ից 50 ձերբակալվածներին՝ այն հաշվով, վոր ամեն մեկ պահակին ընկնի 4 ձերբակալված։

6. Վահանգավոր հանցագործներին ուղեկցե- լիս, յեթե ճանապարհն ընկնում ե մեծ յեր- թեւեկ ունեցող տեղերով, կամ այնպիսի տեղե- րով, վորոնք կարող են նպաստավոր լինել փա- խուստի համար (անտառով, ձորերով, քաղաք- ներում՝ խուլ փողոցներով), կամ զիշեր ժամա- նակ, պահակների թիվը պետք ե ավելացվի հոգված 5-ում նշանակած նվազագույնից, ըստ պահակախումբ նշանակողի հայեցողության, վորն այդ դեպքում պատասխանատու յե, յեթե

ձենբակալվածը փախչում ե պահակների թվի քչության հետևանքով։

7. Հոգեկան հիվանդ ձերբակալվածներին ուղեկցելու նշանակվում է.— հանգիստ, հատուկ հսկողություն չպահանջողին՝ 3, իսկ աղմկարարին 4 պահակ, նույն թվում հաշվելով նայել ավա- գին։

8. Յեթե ձերբակալվածները տարվում են փակ կառքերով, այդ դեպքում նշանակվում ե 2 ուղեկցող պահակ, յուրաքանչյուր կառքի հաշվով։ Մնացյալ պահակները գնում են ուղ- ղակի այնտեղ, ուր տարվելու յեն ձերբակալ- վածները և սպասում նրանց տեղ համնելուն։ Յեթե ձերբակալվածները տարվում են այնպիսի կառքերով կամ սայլերով, վորոնք հարամարեցրած չեն ձերբակալվածներ տեղափոխելու, այդ դեպ- քում կառքի կամ սայլի մեջ նստում են ավագի ցուցմունքով այնքան ուղեկցող պահակներ, վորքան հնարավոր ե, սակայն վոչ պակաս քան յերկու հոգի։

9. Ձերբակալվածների խմբերին սայլեր պիտի տրամադրվեն.—ա) հիվանդներին, յեթե նրանք բժշկական վկայությամբ վոտքով զնալ չեն կարող, բ) այն կանաց վորոնք ունեն զըր- կի կամ մինչե 12 տարեկան հասակի մանուկ- ներ, յեթե նրանք գնում են իրենց ծնողների

կամ աղքականների հետ, գ) յերկաթուղու կաշարան կամ նավամատուց և այդ վայրերից ուղեկցող հոգեկան հիվանդներին, ամեն մեկի համար հատկացնելով մեկ սայլ, դ) ձերբակալվածների իրերը տեղափոխելու:

10. Այն դեպքերում, յեթե ձերբակալվածի սեփական իրերը պետք ե փոխադրվի սայլերով, պահակախմբի ավագը նշանակում է հարկավոր թվով ձերբակալվածներ իրերը դարսելու համար: Իրերը դարսվում են սայլերն ուղեկցող պահակների հսկողության տակ:

Թանօրություն. — Ձերբակալվածների և իրերի սայլերն հետեւում են անմիջապես խըմբին, նրանց պահպանման համար նշանակված պահակների ուղեկցությամբ:

11. Սայլեր հատկացվում են — միաձի սայլի հաշվով — ա) մեկ սայլ չորս մեծահասակ ձերբակալվածներին, հաշված նայել գրի յերեխաներին, բ) մինչև 12 տարեկան փոքրահասակ 5 հոգուն և գ) 20 ձերբակալվածների ձեռքի իրերի համար:

Թանօրություն. — Հոգեկան հիվանդներին ուղեկցող բուժակները տեղափորվում են այդպիսի հիվանդներին հատկացրած սայլերում:

12. Հոդ. 8-11-ում ցույց տված դեպքում Միլիցիան սայլեր հատկացնում է իր ունեցած

նախահաշվի այդ մասին յեղած հատկացուների սահմաններում:

13. Ուղեկցող պահակները պիտի զինված լինեն հրացաններով, ատրճանակներով կամ սառը զենքերով:

14. Ուղեկցելիս պահակի հրացանը պիտի «ուսին» դրած դրությամբ լինի և լցված 4 փամփուշտներով, փամփուշտակալը թողնելով դատարկ:

Ատրճանակները պիտի լինեն չկրծկած բըներում և լրիվ լցված: Վտանգավոր հանցագործներին ուղեկցելիս ատրճանակը պիտի պահակի ձեռքում լինի, փողը ներքեվ ուղղված, բայց հրահանը չքաշած:

Սառը զենքը հանված է լինում և ուսին:

15. Ձերբակալվածները փոխադրության ժամանակ կերպակրվում են չոր կամ տաք կերպերներով, յեթե վերջինս հնարավոր ե ճանապարհին պատրաստել: Մթերքները, ձերբակալվածներին տրվելիք չափով, տրվում ե նրանց, ամբողջ ճանապարհի հաշվով:

Թանօրություն. — Յեթե հնարավոր չե տեղիքը բնականով տալ, կարելի յե ավագ պահակին անհրաժեշտ գումարի դրամական կանխավճար տալ: Ավագը վերապահնալուց հետո ներկայացնում է կատարած ծախքի հաշիվը և վերադարձնում դրամի մնացորդը:

16. Սեփական իրերի թվում բոլոր ձեր-
քակալվածներին թույլ ե տրվում ունենալ.—
զրքեր, գրենական պիտույքներ, մոտիկ անձանց
լուսանկարներ, ուտելիք, լվացվելու պարագա-
ներ, հագուստ ու կոշիկներ մաքրելու և կար-
կատելու առարկաներ, ներքին և անկողնի ըս-
պիտակեղեն յերկու ձեռք, յերկու յերեսսրբիչ, յե-
րեք թաշկինակ, յերկու զույգ գուլպա (փաթա-
թան), փոքրիկ հայելի, ակնոցներ, ամուսնա-
կան ող, ժամացույց, թեյաման, բաժակ, զգալ
բժշկի թույլատրած դեղերը և ախտահանական
նյութեր: Բացի զրանից, ընտանիքավորներին,
վորոնց հետ կան փոքրահասակ յերեխաներ,
նայել կերպակուր յեֆելու աման: Մեկ ձերբա-
կալվածի սեփական իրերի ընդհանուր բաշը մեկ
փթից ավելի չպիտի լինի:

ՈՒՂԵԿՈՂ ՊԱՇԱԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Ձերբակալվածին ուղեկցող յուրաքան-
չյուր պահակի զլսավոր պարտականությունն ե
ձերբակալվածին հասցնել նշանակված վայրը և
վոչ միայն թույլ չտալ ձերբակալվածին փախչել
այլ և արգելել փախուստի ամենափոքր փորձ կամ
վորեւ անկարգություն:

18. Ուղեկցող պահակներն առանձնապես
զգույշ և արթուն պետք ե լինեն և վոչ մի դեպ-

քում, թեկուղ և ամենակարճ ժամանակով, ոչ-
քաթող չանեն իրենց հանձնված ձերբակալ-
վածներին, Քրեյական Որենսգրքի 208-րդ հոդ-
վածի պատասխանատվությամբ:

19. Ձերբակալվածներին ընդունում և ա-
վագը յուրաքանչյուրին առանձին-առանձին, հա-
մաձայն յեղած ցուցակի, ստորագրելով ցրիչ
մատյանում կամ ուղեկցման թղթի պատճեյի
վրա, վորի մեջ պիտի մատնանշված լինի ձեր-
բակալվածին տանելու վայրը:

20. Ձերբակալվածին ճանապարհելիս ավա-
գը զննում ե նրանց ըստ արտաքին տեսքի,
վորպեսզի թույլ չառ վորոշակի հիվանդներին
վոտքով ճանապարհելու, ինչպես և խուզարկում
ե: Յեթե նրանց մոտ գտնվում ե վորեւ զենք,
դանակ, փայտ և այլ առարկաներ, վորոնք կա-
րող են նպաստել փախուստի, անմիջապես արդ-
պիսիք վերցնում ե նրանից: Այդպիսի առարկա-
ները այլ փաստաթղթերի հետ միասին հանձնն-
վում են ձերբակալվածների նշանակման վայ-
րում:

21. Յեթե խումբը ճանապարհ ե ընկնում ճա-
շից առաջ, ուղեկցող պահակախմբի ավագը պիտի
հետեւ, վորպեսզի ձերբակալվածները բավարար-
ված լինեն այդ ամբողջ որվա ուտելիքով,
իսկ յեթե խումբը ճանապարհ ե ընկնում ճաշից

հետո, ապա ընթրիքի փոխարեն ստանում են
կես որվա հաց:

22. Ուղեկցող պահակները չեն կարող ար-
դելել կողմանակի մարդկանց ճանապարհին ձեր-
բակալվածներին իրեր հանձնել, միայն հե-
տևյալ պայմաններով.—

ա). վորպեսզի իրը արվի բացառապես
ավագին և միայն ճանապարհվելու, հան-
գըստի և նշանակման վայրը համնելու տեղե-
րում,

բ). վորպեսզի իրերը չը պարունակեն ի-
րենց մեջ վատորակ մթերքներ, զենք և սույն
հրահանգի հողվ. 20-ով նախատեսնված առ
առարկաներ:

Թաճորուրյուն.—Մթերքով և զբամով հանձ-
նումը, յեթի հատկապես վորեե մեկի անունով
չի, բաժանվում է հավասարապես բոլոր ձերբա-
կալվածների մեջ:

23. Ուղեցող պահակները պարտավոր են
ա) շարունակ իրենց տեղերում լինել և ձեռ-
քից բաց չթողնել զենքը,

բ). ձերբակալվածների հետ վոչ մի հարա-
բերության և խոսակցության մեջ չմտնել,
բացի ծառայության պարտականություններով
անհրաժեշտ դեպքերից և

գ). հետեւ, վորպեսզի ձերբակալված-

ները գնան այն կարգով, ինչ կարգ վոր սահ-
մանված ե յեղել ճանապարհվելիս:

24. Ուղեկցող պահակները չպետք ե թույլ
տան, վորպեսզի ձերբակալվածները ճանապար-
հին ծախեն և փոխանակեն իրենց ունեցած
պետական, ինչպես և սեփական իրերը:

25. Ձերբակալվածների սեփական իրերը,
ճանապարհվելուց առաջ պիտի նայվի, դարսվի
տոպրակների մեջ կամ թեթև կապոցներ շինվի
և, յեթե խումբն ունի փոխադրական միջոցներ,
դարսվի նրանց վրա:

26. Ուղեկցող պահակները կարող են սայ-
լերի վրա դարսել իրենց սեփական իրերը և
վերին հագուստը, բայց վոչ զենքերը:

27. Ձերբակալվածին ուղեկցելիս պահակ-
ները գնում են՝ մեկ պահակ յեղած ժամանակ,
պահակը գնում ե ձերբակալվածի հետեւից,
յերկու քայլ հետ. յերկու պահակ յեղած ժա-
մանակ՝ պահակները գնում են ձերբակալվածի
կողքերից, մի փոքր նրանից հետ, ըստ վորում
ավագը գնում ե աջ կողմից. յերեք պահակ յե-
ղած դեպքում՝ յերկուուր գնում են կողքերից,
իսկ յերբորդը՝ հետեւից, մեծ թվով պահակներ
յեղած դեպքում, շրջապատում են ձերբակալ-
վածներին ամեն կողմից. Վորպես ընդհանուր
որենք ա) ձերբակալվածներին ուղեկցող պա-
հակները ա) ձերբակալվածներին ուղեկցող պա-

հակները ավելի կենտրոնանում են խմբի վերջում և թ) Յ և ավելի հոգուց բաղկացած խըմբի ավագը գնում է վերջից, վորպեսդի կարողանա առջեկի վրա ընդհանուր հակողություն ունենալ:

28. Յեթե ձերբակալվածներին տանելու ճանապարհը ճիշտ մատնանշված չե, այդ դեպքում ավագն իր պատասխանատվությամբ ընտրում է ավելի կարճ, քիչ մարդ ունեցող փողոցներ ու ճանապարհներ, խուսափելով քաղաքներում՝ շուկաներից և խիտ կուտակում ունեցող տեղերից, իսկ գավառներում՝ ավելի մարդաբնակ կետերից, ինչպես և խիտ թափուտներից և անտառներից:

29. Պահակները ճանապարհին խմբին հետեւում են այն կարգով, ինչ կարգով վոր գլուխը են նրանք ճանապարհ ընկնելիս, առանց ցրիվ գալու և խմբից հեռանալու:

30. Պահակները պարտավոր են առանձնապես ուշադիր լինել ձերբակալվածներին գետերի վրայով, պարումներով կամ նախակներով փոխազդելիս, թույլ չտալով, վոր ձերբակալվածները խառնվեն կողմանակի մարդկանց հետ:

31. Պահակները թույլ չեն տալիս ձերբակալվածներին վորորմություն խնդրել, սակայն արդելք չհանդիսանալով կողմանակի մարդկանց

իրեր հանձնել, համաձայն սույն Հրահանքի հոդ. 22—ի. արգելում են նամակ կամ հեռագիր ուղարկել, այլ յեզ վորյեզե այլ կերպ հաղորդակ ցության մեջ մտնել կողմանակի անձանց հետ:

32. Պահակներն իրավունք չունեն ձերբակալվածներից վորեւ իր վերցնել կամ գնել, իրերի և ուտելիքի փոխանակություն անել:

33. Պահակներին արգելվում են հեռանալ ձերբակալվածի մոտից, թեկուղ և ավագի թույլավությամբ:

Ֆանորություն.—Պաշտոնական գործերով, վոր կապ ունի անմիջական պարտականությունների հետ, ավագը կարող է գործուզել պահակի:

34. Պահակները ավագի նշանակումով, պարտավոր են բերել ջուր (յեռացրած), ստանալ (գնել) հաց և թույլատրված այլ մթերքներ պահակախմբի և ձերբակալվածների համար:

35. Ձերբակալվածի փախուստի դեպքում պահակը պարտավոր է ամեն միջոց գործ դնել նրան բունելու, վորի համար ոգտավում և ազատ կառքերով, սայլերով, ավտոմոբիլներով, նաև ոժանդակություն և պահանջում պահակային միլիցիոներներից, կարմիր բանակայիններից և մասնավոր մարդկանցից: Ծայրահեղ դեպքում ձեռք է առնում հոդվ. 36-ի «գ» կետում հիշ-

ված միջոցը, նախորոք պահանջելով փախչողից կանգ առնել:

36. Պահակը հրազենի կամ սառ զենքի գործածության ե դիմում՝

ա) իրեն և իր ուղեկցածներին պաշտպանելու,

բ) ձերբակալվածների ընդիմության կամ աղմկելու դեպքում,

գ) ձերբակալվածի փախուստի դեպքում, յեթե հոգվ. 35-ում ցույց տված միջոցները հնարավոր չե գործադրել:

37. Ուղեկցող պահակները վորպես ընդհանուր որենք, զենքի գործադրության դիմում են միայն ավագի հրաժանով: Այն դեպքերում, յերբ հապաղելը վտանգավոր ե, ինչպես որինակ՝ ձերբակալվածի փախուստը կամ պահակի վրա հանկարծակի հարձակվելը, պահակները վորեւ մեկի հրաժանին չեն սպասում, այլ իրենց սուտ գտնված զենքը գործադրում են սեփական նախաձեռնությամբ:

38. Պահակախմբի ավագը, յեթե փախչողին բռնելը հնարավոր չե յեղել, փախուստի մասին հայտարարում ե քաղաքում՝ Միլիցիայի պետին, ուր տեղի յե ունեցել փախուստը, իսկ շըջաններում՝ մոտակա շըջանային միլիցո-

ներին վերջինները պիտի միջոցներ ձեռք առնեն փախածին բռնելու:

39. Ձերբակալվածի փախուստի համար նըրան ուղեկցող միլիցիոները կամ ավագը յենթարկում ե պատժի, վորպես միջոցներ ձեռք շառնողի կամ արգելք չը հանդիսացողի, կամ վորպես դեպի իր պարտականությունները անփույթ վերաբերվողի, համաձայն այն պարմանների, վորոնց մեջ տեղի յե ունեցել փախուստը, կամ Քր. Որ. 208 հոգվածով:

40. Շանապարհին հիվանդացող ձերբակալվածները, յեթե այդպիսիք այլևս չեն կարող շարունակել ճանապարհը վոտքով կամ սայլով, պետք ե տարվեն մոտակա հիվանդանոց, ըստ վորում հիվանդին հիվանդանոց հասցնող պահակը չի թողնում նրան մինչև ուղեկցող պահակին կամող անձի թույլտվությունը, վորի համար նա պիտի միջոցներ ձեռք առնի վերջինիս իմաց տալու պատահածի մասին:

41. Ձերբակալվածներին նշանակման վայր հասցնելուց անմիջապես պահակախմբի ավագը պարտավոր ե նըրանց հանձնել ստորագրությամբ, ցրեչ գրքով (կամ հատուկ ստորագրությամբ), ուր նշանակվում ե ձերբակալվածներին ստանալու ձիշտ ժամանակը:

42. Ձերբակալվածներին նշանակման վայրը

հասցնող պահակները պարտավոր են հսկել նրանց, մինչև նրանց տեղական հիմնարկության վարչությանը կամ պահակախմբի պետին հանձնելը:

43. Պահակախմբի ավագը, բացի նախընթաց հոգվածներում մատնանշած պարտականություններից, պարտավոր ե՝

ա) իրենից կախված ամեն հնարավոր միջոց ձեռք առնել թեթևացներու ուղեկցող միլիցիոններին ծառայությունը,

բ) հետեւ, վոր ուղեկցող պահակները քաղաքավարի վերաբերմունք ունենան դեպի ձերբակալվածները, վորչափով վոր դա չի թուլացնում պահակային ծառայության պահանջները,

գ) հոգալ ձերբակալվածների ուստելիքի ժաման,

դ) կարեվորության դեպքում դիմել ճանապարհին յեղած պահակային միլիցիոնների ոժանդակության:

ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒՂԵԿՑԵԼԻՄ

44. Քաղաքներում ձերբակալվածներին ուղեկցելիս, միլիցիոններները պարտավոր են՝
ա) ձերբակալվածների հետ գնալ փողոցի

միջից և վոչ մայթով, ընտրելով փողոցի աջ կողմը,

բ) ճանապարհն ընտրել համաձայն Հրահանգի հոդ. 27-ի,

գ) ձերբակալվածի հետ միասին չմտնել ձաշարան, գինետուն և այլ խանութներ,

դ) խուսափել ձերբակալվածների հետ կանգառնելուց, առանց հարգելի պատճառների,

յե) ձերբակալվածների հետ չնստել կառք և ալյն,

զ) թույլ չտալ ձերբակալվածներին նամակ զցել փոստարկղ, ինչպես և նրանց խնդրանոք, ինքը չանի նույնը,

ե) ձերբակալվածի հետ չանցնել զբոսավայրերով, այգիներով և պուրակներով:

ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՈՒՂԵԿՑԵԼԻՄ

45. Ձերբակալվածներին գավառում ուղեկցելու համար շրջանային ավագ միլիցիոնները նշանակում ե անհրաժեշտ թվով գլուղական կատարածուներ, իսկ ծայրահեղ դեպքում՝ նայեվ միլիցիոններ։ Գյուղական կատարածուներից մեկը նշանակվում ե պահակախմբի ավագ։ յեթե պահակախմբի մեջ միլիցիոններ ե լինում, նա ել նշանակվում ե ավագ։

46. Գյուղական կատարածուները ձերբա-
կալվածներին ուղեկցելիս կրում են միլիցոներ-
ների պարտականությունները հավասարապես:

47. Շրջանային միլիցոներները ձերբակալ-
վածներին ուղեկցում են մինչև հարեվան շրջա-
նի ավագ միլիցոների գանված վայրը, ուր և
հանձնում են վերջինիս, հետագա ճանապարհ-
ման համար:

48. Յերբ խումբը կանգ ե առնում հան-
գըստանալու, վոր ընտրվում ե սակավ մարդա-
բնակ վայրերում՝ պահակները հերթով, ըստ
ավագի հայեցողության, կարող են նստել, սա-
կայն ձեռքից բաց չթողնելով զենքը:

49. Զերբակալվածներին ընդունելու, հանձ-
նելու և ուղեկցելու գործում գավառներում
յեվս պիտի առաջնորդվել սույն հրահանգի
4—43 հոդվածներով:

Հաս. Կարգի Պաշտ. Բաժնի Վարիչ՝
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Միլ. Տեսուչ Խ. ԻԳԻԹ ԽԱՆՅԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0212227

187. Գյուղական կամարաշենքի ձեռք
կողածներին առջևից դրա և պահպան
հետ պարունակութանքով ապահովագործ
է. Ենթագլու միջականութեք ձեր բան-
ախքան ազգական ին միջակ բարեկան զա-
րի ամաց միջական պահպան գործը առ-
նահան ին միջական ենթագլու համար մասնակու-
թան համարը.

188. Յայր ին մրց կանգ և առանձ հայ-
ուառանուած այս մարզակ և անկայ մարզ
պահ գործը առջական է եղբայր լուս
առարկ առջապահութեան իրարդ և առանձ առա-
քած առաջապահութեան գործը.

189. Տեղականութեան մասն մեր հայ-
ուառանուած այս մրց գործը պահպանու-
թան մասն առաջապահութեան գործը գործակա-
ծած առաջապահութեան.

Հայ հայրենի կան Բայր ին մրց

Բ. Ե. Բ. Պ. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Բ. Ա. Տ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.